

ՍՊԻՏԱԿ ԵՂԵՌՆ

Էլ ինչպէս է լոյս Երեւանն այս հսկայ,
Երբ գաղտնօրէն արծաթ լեզուն օտարի
Կուլ տալ կ'ուզէ Հայոց լեզուն իմ ոսկեայ,
Էլ ցաւըս ինչ դադարի:

Չեն օրօրում հայ օրօրքներն հայերէն,
Էլ յոյսըս չեն շուրթերն այս հայ մայրերի,
Օտարին կեանք, մայրենուս մահ կը բերեն
Ծով շոյեանքներն օտարի:

Կարմիր ջարդից յետոյ ձերմակ ջարդն հասաւ,
Մօրըս կաթի մահատագնապն է յուզում,
Օտար լեզուածովում դառած ձեռքուած նաւ՝
Հայոց լեզուն է սուզում:

Աշխարհակալ Տիգրան Մեծն էլ գլխիկոր
Նահանջում է՝ ձերմակ ջարդից յաղթուած,
Կուչ է գալիս հայոց արծին, ինչպէս լոր,
Էլ ոնց երգեմ վանդակուած:

Երբ հայ մանկունք չեն թոթովում հայերէն՝
Արիւն-արցունք կուլան աչքերն հայ լեզուի,
Օրօրքները հանց գերեզման կը բուրեն,
Էլ ազգն ինչպէս չկիզուի:

Երբ չեն մօրուց հայ պատանիք հայ խօսում,
Ինձ թըւում է՝ մօրըս լեզուն կը պոկեն,
Ա՛խ, մայրըս ինչ, երբ կորչում է մայր լեզուն,
Էլ ո՞նց լըռեմ ես անքէն:

Երբ չեն երգում, երբ չեն պարում հայերէն,
Ինձ թըւում է, հայոց բոլոր դարերի
Անմահներին իմ երգի հետ կը թաղեն
Լեզուաբահերն օտարի:

Երբ լռում ես, իմ ազգամայր հայերէն,
Ինձ թըւում է, ոսկորներն էլ Մաշտոցի
Օտար լեզուով գերեզմանից կը հանեն,
Կը ձըգեն ծովն արցունքի:

Երբ չեն պաշտում հայ սերունդներն հայ լեզուն,
Ինձ թըլում է, խարոյկի մէջ օտարի
Հազարամեայ Հայոց գրքերն են կիզում
Թաղելով ազգն իմ բարի:

Երբ չեն խօսում ծախուած հայերն հայերէն,
ինձ թըլում է, թէ իմ գրկից խլելով
Իմ որդոցը աչքիս առաջ կը մորթեն,
Չեռքիս շղթայ դնելով:

Երբ իմ ազգն է գաղտնի մաղուած այլերէն՝
Գողացումով հայոց թռռան ու ծոռան,
Ինձ թըլում է, նախահայրերս համօրէն,
Շիրմից վըրաս կը գոռան:

Երբ սուգում է հայոց լեզուի նաւն այսպէս,
Էլ ինչի՞ս է Երեւանն էլ այս վըճիտ.
Իր կեանքով էլ, խոյանքով էլ այսքան վեհ,
Չարժէ թէկուզ մի խրճիթ:

Երբ չեն խօսում խաբուած հայերն հայ լեզուով,
Կ'ուզեմ իջնել խորանն իմ հայ Մաշտոցի,
Սիրւոյս խըրեն՝ ինքնաըստան լինելով,
Գըրիչն իմ լոյս ամրոցի:

Ա՛խ, թէ պիտի մեռնի հայոց սուրբ լեզուն,
Մահուան որմը հաղորդագին թող բախտի,
Թող քառսը վերադառնայ եւ անյոյս
Աստուած ինքն էլ թող կախտի:

Զարթնի՛ր, Մաշտո՛ց, զարթնեցընենք Վարդանանց,
Հայաստանում զուլում, զուլում է Հայոց,
Ամենօրեայ Աւարայրով մեր անանց
Փրկենք Մասիսն էլ դեռ գոց:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ